ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2021/41

Բողոքի ներկայացման ամսաթիվը՝ 31.05.2021թ.

Շտկված բողոքի ամսաթիվը՝ 01.06.2021թ.

Բողոք բերող անձ՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» գնանշման հարցում

Գնման առարկան՝ հեմոդիալիզի համար անհրաժեշտ ջրի մաքրման համակարգի ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել թիվ «ԶՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովից՝

1. դադարեցնել՝ 25.05.2021 թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ, «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ որոշումները:
2. Մերժել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն մասամբ է շտկել, իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում համապատասխան չի ներկայացրել որակի վկայականները:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ **հղումով**.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,
- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ք. Երևան, Մելիք-Ադամյան փող. 1

Բողոքը ներկայացրած անձ՝ «Պրոֆտեստ» ՍՊԸ-ի

Լիազորված անձ՝ Թորոս Տարախչյան

Հասցե՝ ք. Երևան, Կողբացի 28/72

Էլ. փոստ՝ Tendersproftest@gmail.com , ProftestLLC@gmail.com:

Հեռ.՝+374 55 09 58 58, +374 93 14 55 96

Պատվիրատու՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ

Հասցե ՝ ք. Արմավիր, Շահումյան 3

Հեռ.՝ 093-08-10-18

Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

ՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21

Հեմոդիալիզի համար նախատեսված

ջրի մաքրման սարքավորումներ

Բողոք

Բողոքի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը.

Բողոքի առարկա է հանդիսանում «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի կողմից հայտարարված ՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21 ծածկագրով գնանշման հարցման հանձնաժողովի կայացված որոշումները:

բողոքի փաստացի և իրավական հիմքերը.

Հայտերը գնահատման ժամանակ խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1 կետը : Աքվա Ստանդարտ ՍՊԸ ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին մասնավորապես՝ չի ներկայացվել համապատասխան որակի վկայականներ:

Հանձնախժողովը երկրորդ անգամ , հաշվի չի առել վերը նշված պահանջները և հայտը համարել է բավարար խախտելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2 կետը:

Պահանջ: Խնդրում ենք պարտավորեցնել թիվ «ՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/21» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝

1. Դադարեցնել՝ 25.05.2021 թ.-ի գնահատող հանձնաժողովի թիվ 4 արձանագրությամբ, «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու վերաբերյալ որոշումները:

2. Մերժել «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ «Աքվա Ստանդարտ» ՍՊԸ-ն մասամբ է շտկել , իր կողմից առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում համապատասխան չի ներկայացրել որակի վկայականները:

<<Պրոֆտեստ>> ՍՊԸ

ք. Երևան, Արաբկիր 41փ. 12/3,

հեռ 055-095858, tendersproftestllc@gmail.com

<<Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ>> ՓԲԸ

Հ/Հ 220290123490000

ՀՎՀՀ 00120301

Լիազորված անձ՝ Թորոս Տարախչյան

TARAKHCHYAN TOROS 2411920369 Digitally signed by TARAKHCHYAN TOROS 2411920369
Date: 2021.05.27 16:56:30 +04'00'